Կազմված է 12.12.2018թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ԿԱՐԻՔ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

«12» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018Թ.

ԱՐՏԱՀԵՐԹ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
«14» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2007Թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ 211.171.04595

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ

05534685

«14» ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2007Թ.

ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ
001-2 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«26» դեկտեմբեր 2018Թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## «ՓԻՆՔ»
## ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ
## ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

(Նոր խմբագրություն)

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) ոչ առևտրային կազմակերպություն է, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, մասնավորապես՝ ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) անձանց նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

1.2 Կազմակերպությունը գործում է ՀՀ ներպետական օրենսդրության, ՀՀ միջազգային պայմանագրերի և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Կազմակերպության գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը և հաշվետվողականությունը:

1.4 Կազմակերպությունը գործում է ՀՀ ողջ տարածքում և օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.5 Կազմակերպության անվանումն է՝

- հայերեն՝ «Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն,
- ռուսերեն՝ Правозащитная общественная организация “Пинк”,
- անգլերեն՝ “Pink” human rights defender non-governmental organization:

1.6 Կազմակերպության գտնվելու վայրի հասցեն է՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Կոտովսկու փ. տ. 37:

1.7 Կազմակերպությունն ունի խորհրդանիշ, որն անգլերեն տառերով պատկեր է՝ «Pink ARMENIA»:

## 2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ, ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Կազմակերպության առաքելությունն է՝ օրենքով սահմանված կարգով ստեղծել ապահով միջավայր ԼԳԲՏ անձանց համար:

2.2 Կազմակերպության տեսլականն է՝ ունենալ հասարակություն, որտեղ բոլոր մարդկանց իրավունքները հավասար պաշտպանված են և յուրաքանչյուր ոք ազատ է՝ անկախ իր սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից և/կամ գենդերային արտահայտումից:

2.3 Կազմակերպության գործունեության նպատակներն են՝

- աջակցել Հայաստանում ժողովրդավարական ինստիտուտների զարգացմանը՝ մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանություն ապահովելու նպատակով,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել իրավական, սոցիալական, հոգեբանական և այլ աջակցություն՝ իրենց սեռով, գենդերով, սեռական կողմնորոշմամբ, գենդերային ինքնությամբ և/կամ արտահայտմամբ և այլ հատկանիշներից պայմանավորված խտրականությունից, ատելության խոսքից և դրանց հիմքով կատարված հանցագործություններից տուժած անձանց:

2.4 Կազմակերպության շահառուներն են՝ ԼԳԲՏ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր) անձինք, նրանց ընտանիքի անդամները, համախոհները, ՄԻԱՎ-ով ապրող, ՄԻԱՎ-ի

նկատմամբ առավել վտանգի ենթարկվող անձինք (թմրամիջոցների ներարկային օգտագործողներ, սեռական ծառայություններ տրամադրող անձինք):

2.5 Կազմակերպության խնդիրներն են՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝

- տրամադրել իրավաբանական խորհրդատվություն սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կատարված իրավախախտումներից տուժած անձանց, ինչպես նաև իրականացնել վերջիններիս շահերի պաշտպանություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ներպետական և միջազգային դատարանների առջև,
- սոցիալական աջակցության շրջանակներում տրամադրել ժամանակավոր կացարան ատելության հիմքով հանցագործություններից կամ խտրականությունից տուժած անձանց,
- տրամադրել տեղեկատվություն սեռական առողջության մասին, ներառյալ՝ սեռական ճանապարհով փոխանցվող վարակների տարածման կանխարգելման վերաբերյալ,
- ստեղծել կրթամշակութային գիտելիքների զարգացմանն ուղղված խմբակներ,
- ստեղծել տեղեկատվական կենտրոն, որը կիրականացնի խորհրդատվություն, կկազմակերպի դասընթացներ և/կամ այլ միջոցառումներ,
- հասարակության մեջ սերմանել մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր պաշտպանություն և հարգանք, ներառյալ՝ ցանկացած տեսակի խտրականության բացառում,
- մշակել և իրականացնել ազատ ժամանցի կազմակերպման ծրագրեր շահառուների համար, և իրականացնել ակտիվ գործունեություն առողջապահության, մշակույթի, կրթության, գիտության, սոցիալական և այլ ոլորտներում:
- կազմակերպել կլոր սեղաններ, հանդիպումներ, կոնֆերանսներ, սեմինարներ Կազմակերպության անդամներին հուզող արդիական հարցերի շուրջ՝ դրանց լուսաբանման համար օգտագործելով զանգվածային լրատվության միջոցները,
- համագործակցել հասարակական այլ կազմակերպությունների հետ՝ տեղեկատվության և փորձի փոխանակման, համատեղ գործունեության ծավալման համար: Գործարքներ կնքել օտարերկրյա ոչ առևտրային և ոչ պետական կազմակերպությունների հետ, անդամակցել միջազգային հասարակական կազմակերպություններին և այլն,
- իրականացնել սույն կանոնադրությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

## 3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Օրենքով սահմանված կարգով Կազմակերպության անդամ կարող է դառնալ ցանկացած չափահաս ֆիզիկական անձ, ով ցանկանում է մասնակցել նրա գործունեությանը և ընդունում է Կազմակերպության կանոնադրությունը:

3.2 Կազմակերպության անդամ դառնալու ցանկություն ունեցող անձը գրավոր դիմում է ներկայացնում Կազմակերպության Ընդհանուր ժողովին (այսուհետ՝ Ժողով): Կազմակերպության անդամի ընդունելու հարցը քննում և լուծում է Ժողովը՝ անդամների ձայների 2/3-ով:

3.3 Կազմակերպությանն անդամագրված անձն ազատ է դուրս գալ Կազմակերպությունից: Կազմակերպության անդամությունից զրկումը տեղի է ունենում Ժողովի որոշմամբ՝ անդամների ձայների 2/3-ով, եթե նա ծավալել է Կազմակերպության

կանոնադրական նպատակներին հակասող կամ դրանց իրականացմանը խոչընդոտող գործունեություն, և/կամ իր վարքագծով և/կամ խոսքերով արատավորել է Կազմակերպության համբավը:

3.4 Կազմակերպության այն անդամը, որը, խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում, չի վճարել տարեկան անդամավճար, Ժողովի որոշմամբ զրկվում է անդամությունից: Վերստին նրա անդամագրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով:

## 4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

ա/ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտրելու և ընտրվելու Կազմակերպության կառավարման մարմիններում.

բ/ ներկա լինելու Ժողովին կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերին անձամբ.

գ/ ցանկացած դեպքում անվճար օգտվելու Կազմակերպության ծառայություններից.

դ/ ծանոթանալու Կազմակերպության մարմինների արձանագրություններին, ստանալ նրանց ընդունած որոշումների պատճենները.

ե/ վերադասության կամ դատական կարգով բողոքարկելու Կազմակերպության մարմինների որոշումները.

զ/ Կազմակերպությունից պահանջելու տեղեկություններ, ստանալու փաստաթղթերի պատճեններ՝ Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, մարմինների արձանագրությունների, որոշումների, գույքի կառավարումից ստացված դրամական միջոցների վերաբերյալ, ինչպես նաև ստանալու նրա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրած անկախ աուդիտորի եզրակացության պատճենը, որոնք վերաբերում են վերջին երեք տարիներին.

է/ իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներ:

4.2 Կազմակերպության անդամը պարտավոր է՝

ա/ հոգ տանել Կազմակերպության հեղինակության մասին,

բ/ կատարել Կազմակերպության կանոնադրությունից բխող պահանջները, ղեկավար մարմինների որոշումները,

գ/ մուծել մուտքի վճար և ամսական անդամավճար՝ Խորհրդի կողմից սահմանված լինելու դեպքում, սահմանված չափով ու կարգով.

դ/ բարեխղճորեն կատարել ստանձնած պարտականությունները.

4.3 Կազմակերպության կանոնադրությունից բխող պահանջները խախտելու կամ իր ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում անդամի նկատմամբ Կազմակերպության Ժողովի կամ Խորհրդի կողմից կարող են կիրառվել կարգապահական տույժի միջոցներ՝ նկատողության, երկուսից ավելի նկատողության արկայության դեպքում՝ Կազմակերպության անդամությունից զրկման տեսքով:

4.4 Կազմակերպության անդամների թիվը չի կարող գերազանցել երեսունը:

## 5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

5.1 Կազմակերպությունը հանդիսանում է իրավաբանական անձ՝ պետական գրանցման պահից:

5.2 Կազմակերպությունն ունի առանձնացված գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, կնիք՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով, դրոշմ, հաշվարկային հաշիվ բանկում՝ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա արժույթով, իր անունից կարող է ձեռք բերել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, որպես հայցվոր կամ պատասխանող հանդես գալ դատարանում:

5.3 Կազմակերպությունը կարող է ունենալ խորհրդանիշ:

5.4 Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

5.5 Կազմակերպությունն իր կանոնադրության նպատակներին համապատասխան իրավունք ունի՝

1) իր անունից ձեռք բերելու և իրականացնելու գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրելու պարտականություններ, դատարանում հանդես գալու որպես հայցվոր կամ պատասխանող.

2) բացելու բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով.

3) ստեղծելու այլ կազմակերպություն կամ լինելու նրա մասնակից.

4) ստեղծելու առանձնացված ստորաբաժանումներ կամ հիմնարկներ.

5) տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին.

6) կազմակերպելու և անցկացնելու խաղաղ, առանց զենքի հավաքներ.

7) օրենքով սահմանված կարգով ներկայացնելու ու պաշտպանելու իր և իր անդամների, շահառուների և կամավորների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում.

8) համագործակցելու այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային կամ օտարերկրյա կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծելու Կազմակերպություն կամ անդամակցելու նրանց ստեղծած Կազմակերպությանը՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը.

9) կատարելու օրենքով չարգելված այլ գործողություն:

## 6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1 Կազմակերպությունը պարտավոր է՝

1) վարել իր անդամների և կամավորների հաշվառումը.

2) օրենքով նախատեսված դեպքում ենթարկվել պարտադիր աուդիտի.

3) պաշտոնական կայքի առկայության դեպքում հասցեի վերաբերյալ ծանուցել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությանը.

4) օրենքի պահանջների կատարումը ստուգելու համար Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Լիազոր

մարմին) պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել իր կառավարման մարմինների որոշումների պատճենները կամ գործունեության մասին այլ փաստաթղթեր.

5) Կազմակերպության անդամի պահանջով ոչ ավելի, քան պահանջի ստացման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում, նրան հնարավորություն տալ ծանոթանալու Կազմակերպության կանոնադրությանը, հիմնադիր այլ փաստաթղթերի, ժողովի որոշումներին կամ տրամադրել դիմողին թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ պահանջի ստացման օրվանից հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում նշված տեղեկությունները, փաստաթղթերը տրամադրելու համար կարող է գանձվել վճար, որը չի կարող գերազանցել դրանք տրամադրելու համար կատարված ծախսերը.

6) Կազմակերպության կանոնադրության փոփոխությունների, ինչպես նաև վերակազմակերպման կամ լուծարման դեպքերում՝ օրենքով սահմանված կարգով դիմել ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն.

7) իր գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները ներկայացնել Կազմակերպության գործադիր մարմնի հաստատմանը՝ ապահովելով այդ հաշվետվությունների հրապարակայնությունը.

8) կատարել օրենքով սահմանված այլ պարտականություններ:

6.2 Կազմակերպության մարմինները նրա անունից հանդես գալիս պետք է գործեն բարեխղճորեն և ողջամտորեն՝ ի շահ Կազմակերպության:

## 7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1 Կազմակերպության գործունեության և կառավարման ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը պատկանում է Կազմակերպության բարձրագույն մարմնին՝ Ժողովին:

7.2 Կազմակերպության հերթական ժողովը հրավիրվում է 2 տարին 1 անգամ՝ նախագահի կողմից: Կազմակերպության հերթական ժողովը հրավիրում է գործադիր մարմինը՝ անդամների համատեղ հավաքի ձևով կամ եթե դա հնարավոր չէ, ապա հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների կիրառմամբ՝ կազմելով համապատասխան արձանագրություն: Գործադիր մարմինը որոշում է ժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև ժողովի օրակարգի նախնական տարբերակը և այդ մասին ոչ ուշ քան 5 օրվանից առաջ պատվիրված նամակով, կամ էլեկտրոնային եղանակով կամ զանգվածային լրատվության միջոցներով կամ օրենքով սահմանված այլ եղանակներով ծանուցում է կազմակերպության անդամներին և կառույցներին:

7.3 Կազմակերպության արտահերթ Ժողով հրավիրվում է գործադիր մարմնի նախաձեռնությամբ կամ Կազմակերպության անդամների առնվազն մեկ երրորդի նախաձեռնությամբ՝ նախագահի կողմից.

7.4 Կազմակերպության արտահերթ Ժողովը գումարվում է վերոնշյալ նախաձեռնությունից ոչ ուշ, քան 5 օրվա ընթացքում: Արտահերթ Ժողով գումարելու ժամանակի և վայրի մասին Ժողովի մասնակիցները ծանուցվում են արտահերթ Ժողով անցկացնելու օրվանից 5 օր առաջ:

7.5 Ժողովն իրավասու է՝

1) կատարելու Կազմակերպության կանոնադրությունում փոփոխություններ կամ լրացումներ կամ նոր խմբագրությամբ հաստատելու կանոնադրությունը.

2) ստեղծելու այլ իրավաբանական անձ, որոշումներ ընդունելու այլ կազմակերպությունում Կազմակերպության մասնակցության մասին.

3) հաստատելու Կազմակերպության կառուցվածքը.

4) ընտրելու Կազմակերպության գործադիր մարմին.

5) որոշումներ ընդունելու Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված մարմինների կազմավորման, ընտրության (նշանակման) կամ նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու (զբաղեցրած պաշտոնից ազատելու) մասին.

6) կազմակերպության գործադիր մարմնի վարձատրություն նախատեսված լինելու դեպքում սահմանելու վարձատրության կարգը և պայմանները.

7) ընտրելու Կազմակերպության աուդիտն իրականացնող անձին (աուդիտորին), եթե օրենքի համաձայն՝ Կազմակերպությունը ենթակա է պարտադիր աուդիտի.

8) հաստատելու Կազմակերպության ռազմավարությունը, եթե Կազմակերպությունը նախատեսում է ունենալ ռազմավարություն.

9) 2 տարին մեկ հաստատելու գործադիր մարմնի կողմից Ժողովի գումարմանը նախորդող տարիների ընթացքում հաստատված Կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները.

10) դադարեցնելու Կազմակերպության մարմինների իրավական ակտերի պահանջներին և կանոնադրությանը հակասող որոշումների գործողությունը.

11) ընդունելու որոշում Կազմակերպության վերակազմակերպման մասին.

12) ընդունելու որոշում Կազմակերպությունը լուծարելու մասին, բացառությամբ դատարանի վճռով լուծարվելու դեպքերի.

13) ընդունում է Կազմակերպության անդամներին, ինչպես նաև նրանց ազատում կամ զրկում է անդամությունից.

14) իրականացնելու օրենքով կամ Կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

7.6 Ժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե նրան մասնակցում են Կազմակերպության անդամների կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունում են բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությանբ: Ժողովի արձանագրությունը ստորագրում են ժողովի նախագահողը և քարտուղարը: Ժողովի արձանագրությունները պահպանվում են հինգ տարի:

7.7 Խորհուրդն ընդունվում է Ժողովի կողմից՝ երկու տարի ժամկետով: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են Կազմակերպության Նախագահի կողմից ոչ ուշ քան 6 ամիսը մեկ անգամ: Խորհրդի նիստ կարող է հրավիրել նաև Կազմակերպության անդամների 20%-ի, Խորհրդի երկու անդամների պահանջով:

7.8 Խորհուրդը՝

ա/ առաջարկություններ է ներկայացնում Ժողովին՝ նրա բացառիկ իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ.

բ/ Կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում է խրախուսանքի և տույժի միջոցներ.

գ/ ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը՝ ժողովների միջև ընկած ժամանակահատվածում.

դ/ սահմանում է Կազմակերպության անդամների կողմից մուտքի վճարի և անդամավճարի մուծման չափերը, կարգը և ձևերը.
ե/ տնօրինում և կառավարում է Կազմակերպության՝ մեկ միլիոն դրամը գերազանցող արժողությամբ ցանկացած տեսակի գույքը.
զ/ ստեղծում և լուծարում է Կազմակերպության հիմնարկները, առանձնացված ստորաբաժանումները /մասնաճյուղեր, ներկայացուցչություններ/, ինչպես նաև հաստատում է նրանց կանոնադրությունները.
է/ սահմանում է Կազմակերպության ղեկավար մարմիններում ընդգրկված անձանց վարձատրության կարգը և չափը, բացառությամբ կազմակերպության նախագահի, որի դեպքում վարձատրության կարգը և չափը սահմանվում են ժողովի կողմից

7.9 Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե ժողովին մասնակցում են իր անդամների կեսից ավելին:

Խորհրդի որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

Ձայների հավասարության դեպքում Նախագահի ձայնը վճռորոշ է:

7.10 Կազմակերպության Նախագահն ընտրվում է ժողովի կողմից՝ 2 տարի ժամկետով՝ անընդմեջ առավելագույնը երկու անգամ՝ Կազմակերպության աշխատակիցների կողմից առաջադրված թեկնածուներից:

7.11 Կազմակերպության Նախագահը.

Կազմակերպության կանոնադրությանը և Ժողովի որոշումներին համապատասխան՝

1) ապահովում է Ժողովի կամ Կազմակերպության կոլեգիալ կառավարման այլ մարմինների որոշումների կատարումը.

2) ներկայացնում է Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.

3) տալիս է լիազորագրեր.

4) բանկերում բացում է Կազմակերպության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.

5) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

6) հաստատում է Կազմակերպության հաստիքացուցակը և տարեկան ծախսերի նախահաշիվը.

7) հաստատում է Կազմակերպության գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերը, այդ թվում՝ նրա առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ներքին կարգապահական և այլ կանոնները.

8) հաստատում է Կազմակերպության, ինչպես նաև նրա մարմինների հաշվետվությունները, կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման տարեկան հաշվետվությունները, որոնք 2 տարին մեկ անգամ ներկայացնում է ժողովի հաստատմանը

9) իրականացնում է օրենքով և Կազմակերպության կանոնադրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ.

10) տնօրինում և կառավարում է Կազմակերպության՝ մինչև մեկ միլիոն դրամ արժողությամբ ցանկացած տեսակի գույքը:

7.11.1 Կազմակերպության Նախագահը պարտավոր է հաշվետվություն ներկայացնել Խորհրդին՝ Կազմակերպության գործունեության, հաշվեկշռի, գույքի պահպանման և այլ

ամփոփ տվյալների ստուգման արդյունքների մասին՝ Խորհրդի կողմից առկա պահանջի դեպքում:

7.12. Կազմակերպության Գործադիր տնօրենը.

7.12.1 Գործադիր տնօրենը նշանակվում է Նախագահի կողմից՝ աշխատակիցների կողմից առաջադրված թեկնածուներից: Գործադիր տնօրենը կազմակերպում է Կազմակերպության ողջ գործավարությունը, անդամավճարների գանձումը, սահմանված լինելու դեպքում, վարում է անդամների հաշվառումը, իրականացնում է Կազմակերպության Նախագահի և Խորհրդի կողմից տրված այլ հանձնարարությունները:

7.12.2 Գործադիր տնօրենն իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից հանդես է գալիս առանց լիազորագրի:

7.13. Կազմակերպության Նախագահի բացակայության ընթացքում վերջինիս լիազորություններն իրականացնում է Գործադիր տնօրենը:

## 8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1 Կազմակերպության գույքը հանդիսանում է Կազմակերպության սեփականությունը:

8.2 Կազմակերպությունը որպես սեփականություն կարող է ունենալ անշարժ և շարժական գույք, սարքավորումներ, դրամական միջոցներ, արժեթղթեր և օրենքով չարգելված այլ գույք: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնային իրավունք չունի:

8.3 Կազմակերպության սեփականության գոյացման աղբյուրներ կարող են լինել՝

ա/ Կազմակերպության անդամների մուտքի վճարները, անդամավճարները, դրամական և նյութական ներդրումները,

բ/ բանկերից և վարկային կազմակերպություններից ստացած վարկերը,

գ/ դրամաշնորհները, նվիրաբերությունները,

դ/ բարեգործական ներդրումները, քաղաքացիների և կազմակերպությունների նվիրատվությունները,

ե/ Կազմակերպության կողմից հիմնադրված տնտեսական ընկերությունների կողմից փոխանցված գումարները,

զ/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ մուտքերը:

8.4 Կազմակերպության սեփականությունը գտնվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության ներքո:

8.5 Կազմակերպության սեփականությունը կարող է բռնագրավվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

8.6 Կազմակերպության միջոցները կարող են օգտագործվել միայն կազմակերպչական ծախսերի և կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար:

8.7 Կազմակերպության ղեկավար և վերահսկողություն իրականացնող մարմիններում ընտրված անձինք Կազմակերպության կողմից կարող են վարձատրվել: Նշված անձանց վարձատրության չափը սահմանում է Խորհուրդը:

## 9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

9.1 Կազմակերպությունը օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնում է հաշվետվություններ:

9.2 Եթե Կազմակերպության գույքի ստացման աղբյուր են հանդիսացել հանրային միջոցները (պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների և այլ հանրային միջոցներ տնօրինող մարմնի կամ իրավաբանական անձի միջոցները), ապա Կազմակերպությունը պարտավոր է յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող մայիսի 30-ը, Կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված կայքում հրապարակել օրենքով նախատեսված հաշվետվությունը:

9.3 Կազմակերպության հաշվետվությունը ներառում է՝

1) իրականացրած ծրագրերի անվանումներն ու վայրերը.

2) տարեկան մուտքերի (դրամական և գույքային) ընդհանուր գումարը և ստացման աղբյուրը.

3) դրամական միջոցների և այլ գույքի օգտագործման, կանոնադրական նպատակներին ուղղված ծախսերը.

4) իրականացրած ծրագրերի արդյունքների մասին տեղեկատվություն.

5) անդամների, ինչպես նաև կամավորների թիվը (հաշվետու տարվա հունվարի 1-ի դրությամբ), այդ թվում՝ նշում Կազմակերպության միջոցներից հաշվետու տարվա ընթացքում օգտվելու մասին.

6) Ժողովի և կոլեգիալ կառավարման այլ մարմինների նիստերի քանակը.

7) Կազմակերպության գտնվելու վայրը:

## 10. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՈՒՄԸ, ԼՈՒԾԱՐՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

10.1 Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել Ժողովի որոշմամբ կամ դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

10.2 Կազմակերպությունը կարող է լուծարվել Ժողովի կամ դատարանի որոշմամբ: Ժողովը կազմավորում է լուծարային հանձնաժողով և օրենքով նախատեսված կարգով սահմանում լուծարման կարգն ու ժամկետները:

10.3 Կազմակերպության լուծարման ավարտին լուծարային հանձնաժողովը, պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, Ժողովի որոշմամբ սահմանված կարգով, օգտագործում է Կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ, փոխանցում է պետական բյուջե:

**«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպության**

**խորհրդանիշի պատկերը՝**

PINK

ARMENIA

Սույն կանոնադրությունը կազմված է 12.12.2018թ.-ին, և բաղկացած է 11 թերթից:

05